

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ԱՅՑԼ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Հ. Հ. Արտաքին Գործոց նախարար՝
Վահան Փափազեան հիմք ընկերակիցներով՝
Խարյէկի Պետութեան հիւրերը եղան 18-
21 Դեկտեմբեր 1994, խորհրդակցութեանց
նիւթ ունենալով երկու երկիրներու
յարաբերութիւնը եւ գործակցութիւնը
տնտեսութեան, փոխադրամիջոցներու,
առեւտուրի, կրթութեան, գիտութեան եւ
այլ մարդկու մէջ:

Նախարարին կ'ընկերակցէին
 Հայաստանի Գիւղատնեսութեան
 նախարար՝ Աշոտ Գրիգորեան, Կենտպանի
 Տնօրէն՝ Բագրատ Աստրեան, Եգիպտոսի
 եւ Անգլիոյ մէջ հայ դեսպաններ՝ Եղուարդ
 Նալպանտեան եւ Արմէն Սարգսեան,
 Արտաքին Գործոց նախարարութեան մէջ
 Սիցին Արեւելքի երկիրներու Յարաբերու-
 թեանց պատասխանատու Հէնրիկ
 Գրիգորեան:

Դեկտեմբեր 19, երկուշարքի ամրող
 օրը Հայոց Պատրիարքանի եւ համայնքի
 հետ տեսակցութեանց յատկացուած էր:
 Հակառակ տեղատարափ անձնեւին եւ
 անակնկալ փոքրկու եղանակին, հիւրերը
 առաջնորդուեցան Ս. Յարութեան Տաճարը
 եւ Երուսաղէմ Հիմ Քաղաքը, եւ Հայոց
 Պատրիարքանի մէջ Քաղաքը, ուր Արքոց Յակոբեանց
 Մայր Տաճարին մէջ, Խուսարարապետ

Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան
 պատմական եւ արուեստի բանկարժեք
 խոյր, սկիհ, շուրջան եւ այլ կրօնական
 սպասներ ցուցադրեց հիւրերուն:

Հայ Նրիտասարդաց Միութեան եւ
 Հայ Մարմնամարզական Միութեան
 սկառուտներ հիւրերը առաջնորդեցին գեպի
 Ժառանգաւորաց Կարժարանի սրահը, ուր
 հայ հասարակութեան ներկայութեան
 նախարար Վահան Փափազեան խօսեցաւ
 եւ հարցազրոյց ունեցաւ Հայաստանի
 ներկայ կացութեան, Հայաստանի
 Հիմնադրամի, եւ այլ հարցերու մասին:

Ամեն Պատրիարք Արքազան Հայրը,
 Կարողիկոսական Տեղապահի պաշտօնով
 Ս. Էջմիածին կը գտնուէր: Կէսօրին,
 Խարյէկի Արտաքին Գործոց նախարար
 Ծինոն Բէրէզի հրաւերով ճաշի հրաւիրուած
 էին, հիւրերուն հետ միասին Գեր. Դաւիթ
 Արք. Սահակեան, Գեր. Սեւան Նպա-
 Դարիպեան, Գեր. Յուսիկ Նպա-
 Պաղուածան, եւ Խորայէկի մէջ հայ
 դեսպանատան համար յանձնախումբի
 գործոն անդամներէն Յուակ Մունեան,
 Յակոբ Շեօհմէլեան եւ Մարտիրոս
 Նալպանտեան: Խոկ գիշերը, Նօրը Տամ
 հիւրանոցին մէջ ճաշիբոյք մը տրուեցաւ
 ի պատիւ հիւրերուն եւ մասնակցութեամբ
 հայ հասարակութեան: